Չորրորդ Տարի

# ԽԱԹԱԲԱԼԱ

Գինն է 10 կ. Գաւառներում 12 կ. 1909, Շաբաթ, Փետրուարի 21-ին. Թիֆլիս. № 3.

## ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐԻ ՃԱՇԸ ՍՈՒԼԹԱՆԻ ՊԱԼԱՏՈՒՄ



Դոկտոր Տաղաւարեանը և միւս երկու պատգամաւորները սուլթանական ճաշից յետոյ.

Худож.-Лит. С. Бызова, Тифлисъ. Վիմագրատուն Բիխովի

## Ո՞ՎՔԵՐ ԵՆ ԴԱՌՆՈՒՄ ՔԱՀԱՆԱՆԵՐ




Միմնականութիւնը այնպիսի ծառայելիք է ստա-
նում, որ ամենից վերջացող, անգործ ու անբանը, մի
քանի ժամանցներով հայ ազգի գլխին քահանայ են
դառնում։




Բարեգործ տիկնոջ առանձնասենեակում

ეროვნული ბიბლიოთეკა

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՈՒՄ Է

4 Տարի

„ԽԱԹԱԲԱԼԱ"

Երգիծաբանական-սատիրական շաբաթաթերթի

4 Տարի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Նոր գրւող բաժանորդները թերթը ստանում են № 1-ից

| | |
|---|---|
| Տարեկան գինն է Թիֆլիզում 4 ր. | Դուրսը և Արտասահման 5 ր. |
| Կէս տարւանը » » » » 2 ր. 50 | Կէս տարւանը » » 3 ր. |

Խմբագրութիւնը բաց է՝ երբ փակ չէ, իսկ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ փակ է գիշերները.

Մեր հասցէն՝ Тифлисъ, Редакція „Хатабала"

Արտասահմանից՝ Tiflis (Caucase) Rédaction „Khathabala".

Խմբ. Հրատարակող՝ ՅՈՎ. ԽՐԻՄԵԱՆ

## ԳՐԱՍԵՆԵԱԿԸ ԳՏՆՈՒՄ Է

### Դվօրցօվայա փողոց, Վիկտօրիա հիւրանոցի դաւթում.

### Ա Զ Է Ֆ Ը

Եթէ ասեմ, որ ժամանակի հերոսը և ամենայայտնին մեզ մօտ՝ Ռուսաստանում, թէ արտասահմանում այս րոպէիս Եւնոյ (Եւգենի) Ազէֆն է, սխալուած չեմ լինի։

Որովհետև Ռուսական կայսրութ-իւնակ-չութեան 90°/₀ Ազէֆով աւելի շատ է հետաքրքրւում, քան մի ուրիշ բանով, և հետաքրքրւում են միաժամանակ ջերմութեամբ և բիւրօկրատը, և սօցիալիստը, և պրօլետարը, և բուրժուան, և կղերականը և խուլիգանը։

Ինչո՞ւ, ինչ է պատահել։

Ոչինչ, շատ սովորական բան, այն, ինչ որ ամեն օր, ամեն վայրկեանում պատահում է իւրաքանչիւր պատահածից հետ։

Երկւութիւն։

Աւելի լաւ է ասել երկերեսութիւն։

Եւ իրաւ Եւնոյ Ազէֆը ժամանակիս ոչ թէ ամենախայտառակ անձը չէ, այլ կասեմ դրա հակառակը, ամենաօրինաւորն է, բառիս լայն ըմբռնումով։

Ինչո՞ւ, ինչ է արել։

Ոչինչ շատ սովորական երևոյթ, երևոյթ, որ ամեն քայլափոխում և ամեն մի անհատ, որ ապրում է հասարակական գիտակցութեամբ, գործում է, և... սակայն Եւնոյ Ազէֆի չափ քաղաքացիական առաքինութիւն չունի ամիշտ աչքից չքանալու և վերջն էլ յայտարարելու, որ ինքը ոչ այլ որ է, եթէ ոչ մի պրովոկատոր, մի շանտաժիստ։

Եւ ով այժմս պրովոկատոր չէ։

Դրեցէք ձեր ձեռքը ձեր սրտի վրայ։

Հարցրէք ձեր խղճին, եթէ սակաւին ունիք նրանից և նա՝ խիղճը կասի ձեզ թէ դուք, ամենքդ էլ այն էք ձեր գործելակերպով, ձեր մտածողութեամբ ձեր կենցաղավարութիւնով ինչպիսին էր Եւնոյ Ազէֆը։

Եւ ինչացու էր Ազէֆը։

Սոցիալիստի հետ՝ սոցիալիստ, խուլիգանի հետ խուլիգան։

Եւ ով այդպէս չէ ներկայիս։

Միթէ այն բոլոր մարդիկ, որ այժմ տաքուկ պաշտօններ գտած, այսօր այսպէս են և վաղը այնպէս, մի-մի Եւնոյ Ազէֆներ չեն։

Այն բուրժուաները, որոնք երկու երեք տարի առաջ կոկորդիլոսի արցունքներ էին թափում աշխատաւորի շահերի համար. իսկ այսօր ռէակցիայի օրերում, աշխատաւորի ծոր-ծոր արիւնը պատրաստ են խմել։

Այն «սոցիալիստները», որոնք երկու երեք տարի առաջ, «անհատական ազատութեան և մարդկային գիտակցութեան իրաւունքների» համար էին պայքարում, և միաժամանակ ու միատեսակ քամում թշուառ աշխատաւորից ամառականներ, մինչև որ իրենց համար տաքուկ հող, տեղ և գիրք գտան, իսկ ներկայիս...

Այն բիւրոկրատները, որոնք ջվախելով րոպէից, քիչ էր մնում ազատութեան աւանգարդներ հռչակւէին և որոնք ներկայիս պատրաստ են ամենին մահւան դատավճիռ կարդալ։

Այն հրապարակախօսները, որոնք իրենց համոզմունքները այնպէս են փոխում, որպէս ամառը, տօթ ժամանակին քրտնած շապիկը։

Այն գործիչները, որոնք այսօր այս են վաղը այն. և ոչ այս են ու ոչ այն. այլ միմիայն պարագլուխ հասարակական, և, իրապէս ազատ կեանքի ծնունդ։

Այն հոգևորականները, որոնք և իրենց են խաբում և հաւատացեալ ժողովրդին և դեռ չեն ամաչում։

Այն վարդապետները, որ ոչնչով չեն կապւած ոչ Էջմիածնի, ոչ նրա հօտի, և ոչ էլ ոչ մէկի հետ և միմիայն լըքում են, գոփում ու խաբում հասարակութեան։

Այն բանւորները, որ երբէք և ոչ մի տեղ չեն հասկանում սօցիալիզմից, միայն ճառում են թութակի նման մի քանի բառեր։

Այն գործակատարը, որ թէ մուշտարուն է խաբում և թէ խազէինից գողանում։

Այն դաւիթները, այն վահրիճները, որոնք յայտնի եղան բարեգործաբար Տաճկաստանում և որոնց նմանները հէնց այս րոպէիս էլ կան մեզանում հասարակական բոլոր խաւերում։

Այն մարդասպանները, մարդագողերը, որոնք ամեն բան անում են, ամեն ինչ գործում և միմիայն ու միմիայն յանուն իբր թէ գաղափարի, այն ինչ՝ իրօք, ի պատիւ իրենց եսի, ի փրկութիւն իրենց գրպանի և յանդորրութիւն կեանքի։

Եւ այդ մարդիկ, այսօր րոպէ առ րոպէ հետևում են լրագրական լուրերի, «անէկդօտների» Եւնոյ Ազէֆի վերաբերեալ, որպէսզի տեսնեն թէ արդեօք, որը իրենցից աւելի սադանդաւոր է եղել, ինքը թէ Ազէֆը, Ազէֆը, որ չկարողանալով հանդուրժել սօցիալիստների առաջ ամօթի, կամ բիւրօկրատների առաջ անարգանքի, աչքից չքացաւ, գնաց տակ անցաւ և ոչ մի հետքով չերևեցաւ։

Իմ կարծիքով Ազէֆի շանտաժը որչափ յաջող և արդիւնաւոր է եղել, այն չափ էլ անշնորհք վերջինների հետ համեմատած։

Եւ ինչո՞ւ։

Ազէֆի գործը և գործելակերպը իմացւեց, իսկ վերջիններինը որ դեռ ես անյայտ է հանրութեան։

[illegible]

## ԲԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ

(Սիմէօն Եզրիչը եւ իր կառավարիչը)

Կառավարիչ.—Սիմէօն Եզրիչ, մեր բանւորները
Այսօր կանգնեցրին բուրավոյները։
Սիմ. Եզրիչ.—Էլի... Տէ՛ր Աստուած... հոգիս հանեցին.
Ի՞նչ են պահանջում, ինչո՞ւ կանգնեցրին։
Կառ.—Ես ինչ իմանամ, սրանց պահանջը.
Տասը կէտ ունի։
Սիմ. Եզ.—Կարդա մի տեսնենք... աստուածդ տանի։
Կառ.—Առաջին պահանջ—գիրք գրադարան։
Սիմ. Եզ.— Օ՜, գլուխս տարան։
Կառ.—Երկրորդ, վարժարան.
Սիմ. Եզ.—Յօ՜ ախ, չորս վազմի... չէ մի վարդապետ
Չեմ տալիս... յետոյ.
Կառ.—Ծառայ, ճաշարան, բաղնիս, խոհանոց։
Ներկել կազարմի կեղտոտ պատերը.
Սիմ. Եզ.—Բաղնիս, խոհանոց...
Ա՛յ, շատ են տեսել իրենց պապերը.
Չեմ տալիս, կարդա էն միւս կէտերը։
Կառ.—Օրեկան միայն ութ ժամ աշխատանք։
Սիմ. Եզ.—Հա՛, հա՛, հա՛... լա՛ւ, լա՛ւ, երկու ժամ կըտանք։
Կառ.—Իններորդ—ասում մարդը մի կարգ,
Լաւ վերաբերմունք մեծերի կողմից։
Սիմ. Եզ.—Լաւ վերաբերմունք, խօսք ունէք իմ բերնից,
Որ ես տալիս եմ ասացինք նոյնպէս.
Էլ ինչ են ուզում, թող գործի կանգնեն
Եւ պահանջներով—յիմար սրանց պէս.
Էլ այսուհետեւ գլուխ չտանեն։
Սրով եմ տալիս մինչեւ առաւօտ.
Գործի չկանգնեն—ամէնքին բաւչոտ։
Քուրոն

## ԽԵՂՃԻՑ... ՄԱՀՆ ԷԼ Է ԽՈՒՍԱՓՈՒՄ

—

Ընտանիքի հայր էր նա և տասը կանուխ դուրս էր եկել տանից, թափառելու, որպէսզի երեխաների համար հացի փող ձեռք բերէ, բայց... դատարկաձեռն տուն վերադարձաւ։

Երեխաները հօր ոտնաձայնը լսելով առաջ վազեցին դուռը բանալու. ներս մտաւ հայրը և ամօթալից երեսով կանգ առաւ, երեխաները նկատեցին հօր տխրութիւնը և լաց լինելով կրկին թափւեցին յատակի վրայ։

Մարդ և կին իրար երես նայեցին, խոր մի քաշելով մտածեցին, թէ ինչ կերպ լռեցնեն քաղցած երեխաներին։

Մարդը հանեց վրայից իր կիսամաշ վերարկուն և տալով կնոջն ասաց՝ ծախիր և ստացած փողերով, երեխաների համար հաց գնիր։

Կինը վերցրեց վերարկուն և դուրս գնաց տանից, իսկ հայրը մօտեցաւ երեխաներին տեսաւ, որ քնել են, ճակատը շփելով այս ու այն կողմը նայեց, մօտեցաւ պահարանին, բաց արեց, հանեց միջից լուցկի պարանը, բարձրացաւ սեղանի վրայ, պարանի մի ծայրը կապեց առաստաղի դուրս ցցւած գերանից, իսկ միւս ծայրը փաթաթելով վզից, արագիով դէն շպրտեց սեղանը և ինքը քարշ ընկաւ գերանից, խեղդւելու նպատակով։

Սեղանի թրխկոցից երեխաները արթնացան և տեսնելով առաստաղից կախ ընկած ճօճւող հօրը, փախցած աղաղակներով դուրս վազեցին։

Հարեւանները ներս մտան, կտրեցին պարանը, ցած առան խեղդւողին և ուշքի բերին։

Հարեւանների դուրս գնալուց յետոյ, նա բաց արեց պատուհանը և մօտ 4 սաժէն ունեցող բարձրութիւնից իրեն վայր ձգեց փողոց։

Մօտեցան խեղճին անցնող մարդիկ, ոստիկանութիւն, վեր կացրին նրան, և չըփշրւած տեսնելով, հեռացան։

Նայեց նա իր շուրջը ու յանկարծ սկսեց վազել, հասաւ ծովի ափ և առանց մտածելու ծովը նետւեց։ Կէս ժամի չափ չարչարւելուց յետոյ, նրան նկատեցին ու դուրս հանեցին ծովից սաղ-սալամաթ։

Այստեղից էլ արագ քայլերով հեռացաւ ինքն էլ չիմանալով թէ ուր է գնում, գնաց քաղաքից դուրս, մի դաշտ, ծունկ չոքեց և սկսեց աղօթել Աստծուն, մահ կամ ապրելու միջոց, որ յանկարծ նկատեց հեռուից եկող ավտոմոբիլ. առաջ գնաց, փռւեց գետնին, ավտոմոբիլը վրայից անցաւ և խեղճին կանգ առաւ։

Միջի նստողներին խեղճին ցած իջան, վեր կացրին նրան և չփշրւած տեսնելով նստեցին ու ուզում էին հեռանալ, որ նա առաջը կտրեց և դարձեալ ուզում էր տակը ընկնել։

Ճանապարհորդները այս բանը տեսնելով վախեցան և նրան էքսպրոպրիատորի տեղ ընդունելով տւեցին մի քսակ ու իրենք հեռացան։

Նա բացեց քսակը, նայեց փողերին ու խելագարի նման վազեց դէպի տուն, տեսաւ երեխաներին սեղանի առաջ նստած հաց ուտելիս, կինը վերարկուն ծախել ու հաց էր գնել փաթաթւեց կնոջը, պատմեց ամէն ինչ, մօտեցաւ երեխաներին համբուրեց և հանգիստ սրտով պառկեց, մի քիչ հանգստանալու։

Օսկար

## ԿՐՕՆԻ ԴԱՍԻՆ

Աշակերտ.—Տէրտէր, աւետարանումը գրած է, որ մարդասպանները արքայութեան երես չպիտի տեսնեն. ապա խելագարները որտեղ պէտք է գնան, եթէ սպանութիւն գործեն։

Տէրտէր (քիչ մտածելուց յետոյ).—Էդ սիր, հերետիկոս, Աստծոյ գործերին ես ուզում քննել։

## ԵՐԱԶ

Պատանի էի. ունէինք պարտէզ.
Տնկած պարտիզում սիրուն չինարներ
Նոյնպէս վարդերի գեղեցիկ թփեր։
Շատ սիրում էի
Ալ ալան վարդեր...
Յանկարծ հիւսից բարձրացաւ քամին,
Փչեց ծառերը, թափեց տերեւներ,
Փոկեց ու տարաւ բողբոջ կոկոններ,
Կորան իմ յոյսեր։
Հանդարտեց քամին... անցան տարիներ
Հասակս առայ, եւ մեծ մարդ դառած
Դարձեալ կամեցայ տնկել նոր թփեր
Անմահ վարդեր։
Եւ ահա մի օր, լուսին գիշեր էր,
Քաղցր զեփիւռը հանդարտ փչում էր,
Նստած պարտիզում, յոգնած վաստակած՝
Քունս տարել էր։
Տեսնում եմ երազ. Մի սեւ ուրուական
Սուսերի տեսքով, դէմքը խիստ դաժան
Ականջիս ասեց,
Ո՛վ մարդ յանցաւոր,
Մեռած է խիղճդ, հոգիդ ու հաւատ,
Քո այդ ակլանդակ սրտից թունաւոր,
Վայել են միայն տատասկ ու փշեր,
Քեզ պէտք չեն վարդեր
ՍՈՒՍԱՆ

## ԵՐԵՒԱՆԻ ԱՀՒԱԼԱԹՆԵՐԻՑ

—

7 փետրւարի

—Թրխկ, թրխկ, թրխկ, ծեծում են նորաց հանգուցեալ Եազոր Տէր-Սահակեանի դուռը։

—Էս մի վէքսիլ 5000 մանէթ. մի վէքսիլ 8000 մանէթ. էս մի վէքսիլ 10 հազար մանէթ, էս մի վէքս... փի՜ս, էս ո՞վ ա ծեծում դուռը. ասում են ներսից ու դուռը բաց անում։ Դուրս ա գալի մեր առաջնորդի փոխանորդ Հմայեակ վարդապետը։

Բաս հէնց ասում էին թէ սա կորել ա։

—Ո՞վ էք, ինչ էք ուզում... (էս մի վէքսիլ 15 հազար մանէթ) ասում ա վարդապետը դուռը ծեծողներին։

—Մենք թեմական ժողովի պատգամաւորներն ենք. եկել ենք իմանանք, թէ որտեղ լինելու ժողովը, երբ և ինչ գործ կայ։

—Ի՞նչ ժողով... (էս մի վէքսիլ 10 հազար մանէթ) էս տեղեկութիւն չունեմ. գնացէք Սուրբ Սարգսու ժամկոչի մօտ. նա աւելի լաւ կիմանայ. ասում է ու ներսից ներս մտնում և դուռը կողպում։

—

Ժողովեցին թեմական պատգամաւորները ու առաջնորդ ընտրեցին Խորէն հայր սուրբին. ութ հոգի էլ ընտրեցին թեմական խորհուրդ, մեր ազգային զօրքս «ազերբից» էս մարդիկ միացած հայր սուրբին, շատ մեծ մեծ բաներ պէտք է անեն. օրի-

ეროვნული ბიბლიოთეკა

նակ կանոնավոր կառքը պէտք ա տարափիլ գցեն, Սուրբ-Սարգսու անբակ ժամը տեղափոխեն բազարը, իսկ նրա տեղը բերեն Տաթեւու վանքը: Էղած ուսուցչարանը պէտք ա փակեն, թաղերը բանան ու ամեն մի ուսուցչարանի համար, մի մի 1500 մանէթանոց թեմական տեսուչ կարգեն, էլ եդ իրանց ադերքից:

—Բնա:

Վարդանանց պատերազմ... տօնը շատ զօրքա կատարեց մեզանում:

Ժողովուրդը բաժանեց երկու թիրա, տեսուչ, հոգեբարձութիւն, վարժապետներ միացած ժողովրդի մի մասի հետ, գիրք բանեցին չկօլում: Դասերը չինեցին եւ ուխ աւժենանոց մի փիլաքան գրին աշօշկէն, որ իրենց տաւծ մարդիք գէնը բանցրանան:

Քեանդրբրադութինն էլ տարւացրին մեզ:

—Տիկիններ, օրիորթներ, համեցէք. ձէն ա տալիս պ. Շեօլկովնիկովը. - միւսները չը համարձակեցին:

Բայց հոգաբարձութիւններից էրկուսը գրաւ էին մնացել—պ. Իշխանն ու Կանդուրալովը: Էս մարդիք անկարող էին բանցրանալ, չունքի նախ թարգոււ չկար, երկրորդ փիլաքանը վայ թէ կոտրւէր պ. Իշխանի ծանրութեան տակ. իսկ պ. Կանդուրալովը հալա քեանդրբրադութիւն չէր սովորել:

Եւ իրրե Վասակ Սիւնիներ, որոնք դաւաճանել ներսինններին, պահանջեցին հանդէսը ամեն տարւայ պէս գրաւոր կատարել:

Պատերազմը սկսեց:

Կոխւ, հայհոյանք, տուր ու դմփոց, ներսինները զինւած էին դայֆի փինջաններով իսկ գրաւինները մահակ ու բռունցքներով:

Դրաւինները յաղթեցին եւ հանդէսը ոչ ներսում կատարեց եւ ոչ դրսում:

Փալանգուզ Մկօ

## ՍԿԶԲՈՒՆՔ

Աղան.—Ես սկզբունքով հակառակ եմ մահւան պատժին. ոչ ոք իրաւունք չունի միւսին մահացնելու. այդ հակառակ է մարդկային խղճին ու քրիստոնէական ոգուն:

Ծառան (ներս վազելով).—Աղա, Մակուն էծերը մտան բոստանը և մի վարդի թուփ փչացրին. Մակին էլ էնտեղ է:

Աղան (բարկութիւնից կարմրած). – Գնացէք, սպանեցէք էն շ... որդուն, պատասխանը ես կը տամ:

## ԲԱԳՒԻ ՓՈՂՈՑՆԵՐՈՒՄ

—Էդ ո՞ւր էք վազում, տօ, ինչ է պատահել:

—Վա՛. չլսեցի՞ր... էնտեղ երկու ռուսի են գցել և չորս մարդ սպանել:

—Է՛հ... էնպէս վազում էիր, որ ասեցի, երևի մի նորութիւն կայ:

## ԿԱՅՆԷ ՆԱՅԷՅԻՆ ՕՎԱՆԷՍԸ ՆՇԱՆԻԵԼ Է

Թոլայի խորունկ Յօրդայի մէջէն, Թառասովին հօտի Մղաունին փասխտած ծինկէկ տէվթէրի մէջէն աս փոաթարդը փէսէվօտ արեց Պօնմուտին Մելրոնը:

Օվանէսը մէկ օր Նաշշըվանին սաֆայարին վրան վօլթա կանէ, ցիլինտրը կոլոխը, տայախը ձեռքը, մէքառ հինկէկ փալթօ օմուզը ցքած, փաղնաքըմէթցը կըլա մէքամ կէնճ պառիշնայի հետ, կզարնըւի. (քարին պատին զարնւէր պէքիմ) աս պառիշնային փոխոլաժէնի կանէ:

Ինչ անէ վայ կիրին, ադէկ կիսէ որ Նաշշըվանին մէջը պառիշնաները մանթուսի պէտնակ կփընին, կվախնա ծեռքէ տայու տայ, խօսք կուտայ, կնշանուին: Նշանին քիշերը ճուռնալէթին Կոփշն ալ հոն կըլա, գավալը Կոփշն ալ մի սախլ միթքը սոխլ էր փոխոլաժէնի անելու, ամա Օվանէսը սաշիվը կըտրեց, եօխ բլար պէքիմ:

Մէկ օր Օվանէսը կհարցունէ պառիշնային, հօրս Ցմփինկա, հօրիս. ամէն նը օրը քանի ժամ կուտիք:

Ջորս ժամ կասէ:

Ինչպէ՞ս:

Սապախտան չայ դարսւարա, հօրցուկը կերակուր, իրիկւան կէնէ չայ, գիշերը ուժինա:

Կոֆի չիք խմիլ, ինչ:

Ինչպէս չէ, ամեն օր սահաթ տասնմէկինա:

Էտէ՞վ, աս հինկ էղաւ խօմ:

Պառօն, շիտակ է հինկ:

Հինկ ժամ ասիք հա:

Դա, հինգ ժամ:

Քանի՞ տարու իք:

Քսան տարու:

Հինգ ժամ ասիք հա՞:

Պառիշնան հա կասէ ամա, սիրտը կելլէ:

Օվանէսը կասէ, անպէսէնը շինար չօթքի զարնեմ, նայէ պառիշնա. ծնած օրէս մինչի սօր կերիլիք 170000 կատավիթ, 20000 հոխա հաց, 30 կով, 100 օչխար, 10,000,000 գէյթուն, 5000 մայ պալըխ, 30 փութ չիլիմ ծուխ, մէկ վակօն շաքար, 30 եաշշիկ չայ, 100 հոխա կօֆի, 3 վակօն կարտոֆիլ, 1 վակօն քիչէ պոյնուզ, 5000 հոխա կաղին, 50 եաշշիկ փանանիկ, 5000 սախա արադճուր, կէնէ պան պիտ ասել

# ՖԵԼԻԷՏՕՆ

## ՅԱՅՏՆԻ ԳՐՈՂ

Ամբատ Մաթոեանը յայտնի գրող էր: Եւ հաւատացած էր, որ այդ մասին ոչ ոք, ոչ մի կասկած չունի. թէ չէ, եթէ գրող, այն էլ յայտնի գրող չլինէր, էլ ինչու էին ամեն կողմից նրան դիմում, նրանից խորհուրդ հարցնում, նրա կարծիքը խնդրում այս կամ այն հեղինակի մասին. և հէնց յայտնի լինելուն չպէ՞տք է վերագրել այն հանգամանքը, որ նրա լայնանիստ սեղանը միշտ ծանրաբեռնւած էր լինում զանազան բովանդակութեամբ ձեռագրներով, որ իրեն էին բերում՝ աչքէ անցնելու համար: Իսկ այն բազմաթիւ երկերը, որ ժամանակ չունենալու պատճառով՝ միայն վերնագրներն էին գրւած, կամ առաջին գլուխը գրած և յարմար բոպէին էին սպասում, լուսաւոր մտքերով լցւելու...

Անշուշտ նրա յայտնի գրող լինելն էր պատճառը, որ այն իրիկունն էլ, մէկն անվստահ քայլերով, կամացուկ դուռը բաց արաւ, պատկառանքով սենեակ մտաւ ու, կարծես զգուշանալով, որ գրողը պիտի վախենայ, տաաց ընդհատւող ձայնով:

—Ներեցէք խնդրում եմ, պարոն Մաթոեան, եթէ համարձակւեցայ ձեր մտքերի ընթացքը շփոթելու, կամ ձեր թանկագին րոպէները խլելու... ես ձեզ մօտ մտնելու յանդգնութիւնն ունեցայ, մի խիստ հարկաւոր խնդրի մասին խորհուրդ հարցնելու, որ ինձ նման նորելուկների համար, կենսական նշանակութիւն ունի... կարճ եմ, արդեօք:

Մաթոեանը գլուխը բարձրացրեց. նա այդ ժամին իր «Հառաչանք» վէպն էր ստեղծագործում և իւրաքանչիւր նախադասութեան վրայ ջղերը վերջին ծայր լարելով՝ մի ամբողջ գլուխ գրել, վերջացրել էր ու երկրորդ գլուխը սկսելու վրայ էր արնում, սակայն սոսկալի յոգնածութիւնից գոյնը թռել էր, մտքերը շաղկապել չէր կարողանում, նոյն իսկ մոռացել էր, թէ ինչ է «Հառաչանքի» բովանդակութիւնը, որպէսզի իր բեղմնաւոր գրիչը շարժել կարողանար: Եւ նա կամենում էր ուղեղի թափը մի այլ խնդրի վրայ իջեցնել, բայց «այլ խնդիրն» էլ էր խուսափում նրա առաջից: Ուստի այն նիհար երիտասարդի մուտքը, նրան մինչև անգամ ուրախութիւն պատճառեց, բայց որպէսզի իր շարժումը համապատասխան լինի իրա հեղինակութեանը, գլուխը դանդաղօրէն վեր քաշեց, աչքերը կկոցելով նայեց երիտասարդին ու ասաց.

—Խնդրեմ, առանց քաշւելու... համեցէք, ես պատրաստեմ օգնութիւնս ցոյց տալու, եթէ ձեռնահաս լինեմ... համեցէք...

Երիտասարդն ամաչկոտութեամբ մօտեցաւ գրասեղանին, աթոռին նստեց, մատները սանրաձև խրեց երկար մազերի մէջ, կմկմաց և վերջը ասաց դողալով.

—Ես մի վէպ եմ գրում՝ «Պղպջակներ», վերնագրով. քառասունութ գլուխ գրել եմ, որ անում է 1500 երես, մնում է միայն երկու գլուխ, և երևի արդէն գրած, վերջացրած կը լինէի, եթէ մի հանգամանք ինձ չխանգարէր... Գիտէ՞ք, վէպիս հերոսուհին մի քսան տարեկան, գաղափարական օրիորդ է, որ սարեր ու ձորեր ընկած՝ իր դաւանանքըն է քարոզել, ամեն տեսակ զրկանքներ տարել. մրսել, հիւանդացել, մահւան չէմքից յետ դարձել, շնորհիւ մի բարի և հմուտ բժշկի, էլի մտել ժողովրդի մէջ, երեք հա-

Այս Թէքքը ես քաղել եմ մի խեղճուկ գեանջեցու, որը պարծենում էր ամեն տեղ, որ ո՛չ մի քաղաքում իրաւաբանութիւնն ու արդարադատութիւնն այնքան չի զարգացել, որքան Գեանջում։ Այս հայրենասէր քաղաքացին հաւատացնում էր ինձ, որ իր հայրենի քաղաքը տարեկան 400 հոգի սիբիրական է տալիս և 1860 հոգի բանտարկեալ։ Սա աւելացնում էր, որ Գեանջում 38 տարուայ ընթացքում, ազգաբնակութիւնը մնում է 38,000. ոչ աւելանում է ոչ պակասում, որովհետև եթէ տարին 400 հոգի սիբիր են գնում, за то ճիշտ 400 հոգի էլ Սիբիրից Գեանջա են փախչում... Սիբիր գնալու համար, բայց փոխանակ Սիբիրի գալիս են կլուբ ու անգամ գրւում...

Ինչ երկարացնեմ. եթէ դուք, ընթերցող, մինչև օրս Գեանջա չեք մտել, մեղք եկէք ձեզ և երբէք չ մտնէք...

Հետևեցէք խորհուրդիս և դուք, երդւում եմ, բաղդաւոր կը լինէք...

Սասունէց

## ԺԱՄԱՆԱԿԻ ՈԳԻՆ

—Էդ ի՞նչ ես անում, քաւո՛ր։

—Տիկինիկը կախաղան եմ հանում, հայրիկ. տես ինչպէ՞ս է ճօճւում։ Մեր Սմբատին էլ որ կախեն, էլի այսպէս ճօճւելու է։

## ԴԻՊԻ ԲԱԳՈՒ

—Մնաք բարո՛վ, բարեկամներ, մնաք բարով լեռներ ու ձորեր. մնաք բարով դաշտեր ու աղբիւրներ. էլ ձեզ չեմ տեսնի... ես գնում եմ մեռնելու։

—Ինչո՞ւ էք այդպէս յուզւած... ո՞ւր էք գնում, պարո՛ն։

—Ա՛խ, Բագո՛ւ եմ գնում, Բագո՛ւ։

## ԱՊԱ՛, ՀԱՍԵՑԷՔ

Այգի էի, եւ էլի եմ.
Փորւում էի, էլ փորւում չեմ.
Ու չգիտեմ պատճառն ինչ է՝
Որ ինձ իմ տէրն էլ փորում չէ։

Այգի էիր եւ էլի ես,
Փորւում էիր, էլ փորւում չես.
Մեղքն առիւծի թաթինն է՝
Որ քո տէրը քեզ փորում չէ։

Այգին, որ դու ասում ես,
Մտայ՝ ու օյինով մնացի ես.
Մի կողմ արի թուփն՝ եւ որթը գնացի,
Բայց. էն Աստւածն, ես նրան ձեռ չտւեցի։

Ա. Մ.

## ՀԱՅԿԱԿԱՆ ՄՏՔԵՐ

Հայրին ասին.—«աշխրհ լոյս, սահմանադրութիւն է». ասաց. «հէնց իմացայ ասում ես, էլ կատարած չէ լինելու»։

Հայրին ասին.—«արի քէֆ անենք». ասաց. «ապտակը կատարածը վերջանայ, յետոյ գլխիս վրայ. եթէ միայն գլուխս մնայ ուսերիս վրայ»։

Հայրին ասին.—«ինչ բաղդ ունիս. երէք տեղ ես, երէքն էլ ազատ». ասաց. «երէք ազատը քեզ լինի, մէկ հանդարտը ինձ տուր»։

Չէնով Օհան

## ՓՈՔՐԻԿ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

Իր գրութեամբ գոհ ստրուկը, կըրկնակի ստրուկ է, որովհետև ստրկացած է նրա ոչ միայն մարմինը, այլև հոգին։

—

Յաղթւել բառ, կնոջ բառարանում չկայ։

—

Աշխարհն առանց կնոջ, սիրտն առանց սիրոյ—աւերակներ են։

## ՊՈՍՏ-ԱՐԿՂ
### ԽԱԹԱԲԱԼԻՍՏԱԿԱՆ

Ալմգիլս Միկիտան Եսայերին.—Ափսոս, ափսոս քոյր փող ես խարջի ու պագրանիցա ես գնացի, էնդի էլ միկիտանի դուքան ես բաց արի. հէր օրհնած, պատ ուտիմ, պատ ուտիմ, էն էլ թանէ պայա ուտի՞մ։

Էս մէկ։

Վրայ էրկուսն էլ էն քոր՝ վարպանքդ իմ անում ու տեսնում, քոր ջեր քեզ էլի է պակաս, ջեր կուրող թամամ չես արի, թէ չէ մաշ մինձ մինձ քոր խոսում ես, հալբաթ չես գիտում 129 ու 132 ստատիէքի զօրութիւնը։

Դուն մաշարն ջրամը ես շանց տալի, էանց խօ մամիկէս էլ կանայ գրիւ.

Նուխի. խաթաբալիստ աէրտէրին.—Խաս հանէցի, քոր վարթապետին գովում ես. Աստուծ տայ, քոր մէ գլուխ էանց սիրով բլիք ու հայ էլ մարհրամանք իմ անում ձեր առաջնութինն էլ ու տիրացուին էլ, Անհարան վարթապետին Նուխի թողնին, մինչեւ կաթղիկոսի գալը, ան խալխի կամքը։

---

ես, նրան ողեարում քո սրտի ամենաուժեղ զգացմունքներով, շէնք ու շնորհք տալիս, գրչի հարւածներով նրան կռում, զարդարում ամենագեղեցիկ իղէալներով, մարդամէջ դուրս բերում, բայց վերջը մնում ձեռքին կրակ ընկած. թէ ինչպէ՞ս անես, որ ետևից թափ տաս, ազատես... կենդանի թողնես, պէտք է որևէ կերպով արդարացնես նրա կենդանի մնալը. իսկ այդ ամեն անգամ չի յաջողւում. սովորաբար ես լինում մի քանի գլուխ ես գրելու, որ այնքան էլ հեշտ բան չէ. շատ անգամ անհրաժեշտ ես գտնում կամ գնդակ ռատացնել ճակատում, կամ դաշոյն մխել կուրծքը, կամ թունաւորել, և կամ ինքնասպանութիւն գործել տալ, նայած նրա տեմպերամենտին և բռնած ուղղութեանը։ Երբ ես գրում էի իմ «Միգաւս» վէպս, էլ վերջացնելու հնար չէի գտնում. հերոսիս ոչ մի կերպ չէի կարողանում հաշտեցնել այն մտքի հետ, որ վաղուց ժամանակ է վերջակէտ դնելու, և ինչ մեղքս թաքցնեմ. շատ դէս ու դէն ընկնելուց, տասնեակ թերթեր նորից գրելուց ու պատառոտելուց յետոյ, հոգիս ազատելու համար, վերջապէս վերցրի, նրան բանտարկել տւի, տողի վերջին բազմակէտեր դրի, և ամեն ինչ հանգստացաւ. համ վէպս էֆֆեկտով դուրս եկաւ, համ էլ ջանս գլուխս ազատեցի... Ախ եթէ իմանաք որքա՞ն տանջանքների է ենթարկւում հեղինակը, մինչև որ այդպիսի բարեյաջող ելք է կարողանում գտնել... Եթէ հնար լինէր, ես չէի գրի և ոչ մի տող, բայց ինչ արած, որ այդ է իմ կոչումը, որ ես սահմանագրելու եմ հրաւիրւած, որ իմ պարտականութիւնն է մարդկանց վարքն ու բարքն ուղղեցնելու և ես կը կրեմ, կը կրեմ իմ խաչս...

—Այո՛, այո՛,—կանչեց երիտասարդը, փախենալով թէ Մատթեոսը երկար կը շարունակէ իր գեղումները,—այո՛, կրեցէք ձեր խաչը, հասարակութիւնը ձեզ է սպասում իր անվերջ ցաւերով. և եթէ կարողանայիք ինձ հերոսուհուս համար մի խորհուրդ տալ...

—Վերցնում ես նկարագրելու՝ մի վարդաշարունակից մատղաշ Մատթեոսը, առանց ուշադրութիւն դարձնելու դիմացինին,—կամ մի գեղեցիկ աղջիկ, կամ սար ու ձոր, կամ եղանակը, կամ մի որևէ անասուն, արօտ, աղբիւր կամ ամպ, բայց տեսնում ես, որ գրողների մի անթիւ բազմութիւն, արդէն հազարերորդ անգամն են նկարագրել նոյն նիւթերը, անհամեմատ լաւ են, իսկ քեզանից պահանջում են ինքնուրոյնութիւն. հակառակ դէպքում՝ բանագող են անւանում նոր նկարագրողին, որ միանգամից զգում է հեղինակի վարքն ու անունը։ Ինչ անել այդ դէպքում... մնում է նոյն գնալ առանց սար ու ձորերի, առանց անասունների, կամ թէ թռուցիկ կերպով յիշել և անցնել, որովհետև ինքնուրոյն լինելը, միայն մի առաւելութի պատահած է, որ անբարեխիղճ մարդիկ են սահմանել գրողների համար։ Եւ...

—Ի հարկէ,—ընդհատեց երիտասարդը.—կատարեալ ճշմարտութիւն և հեղինակաւորութիւն է ձեր բոլոր ասածները, և հէնց ձեր հեղինակաւորութիւնն է պատճառը, որ ձեզ դիմեցի, խորհուրդ հարցնելու, թէ՝ ինչ անեմ հերոսուհուս հետ։

Մատթեոսն ուշադրութեամբ, նոր գլխի ընկաւ, թէ ինչ է ուզում երիտասարդը, և ճակատը շփելով՝ կանչեց.

—Ա՜... ես բոլորովին մոռացել էի... ասում էք, որ ձեր հերոսուհին 20 տարեկան է, և գեղեցի՞կ։

—Այո, մի կատարեալ հրեշտակ...

—Քաջ է, ու անմեղ։

—Երկինք սառած բանը չունի։

—Հիանալի. ուրեմն թողէք նա գոհ դառնայ մի զզրաղդ պատահարի... ասպատակելի անձրև գայ, գետերից մէկը հոսելով եկէ, իսկ օրիորդն անպատճառ ցանկանայ միւս ափն անցնել. թէ ձիու կողերը, գետը մտնէ, և հեղեղը կուլ տայ նրան, իր ձիու հետ, և դրանով հարցը կը փակւի։

Մասաղօր

# 23 24 25 26 27 и 28 ФЕВРАЛЯ

## ЕЩЕ ПРОДАЛЖЕНА НА ШЕСТЬ ДНЕЙ

# ГРОМАДНАЯ ДЕШЕВАЯ ПРОДАЖА

## ВЪ МАГАЗИНѢ

# П. С. ДОРОЖНОВА

*Сололакская ул. д. Гургенова телефонъ № 583.*

Такъ какъ всей той массы товара предназначенномъ на громадную дешевую продажу въ такой короткій промежутокъ, небыло возможнымъ выпрадать и притомъ часть товара случайно купленнаго была замедленна въ пути; а по этому все что осталось непроданнымъ и вновь дополученнымъ. въ продолженій выше указанныя въ 6 дней т. е.

23 го, 24 го, 25 го, 26 го, 27 го и 28 го февраля

Все те товары будутъ продаватся по темъ жѣ неслыханнымъ досихъ поръ дешевымъ цѣнамъ

# ВСЕ ПОРОЗИТЕЛЬНО ДЕШЕВО

Торговля въ дни дешевой продажи пройзводится отъ 9 час. утра до 2½ час. дня и отъ 4 часовъ до 6½ часовъ вечера

# ԱԿՑԻՕՆԵՐԱԿԱՆ

# ԳՐԱՄՄԱՖՕՆ

# Ը Ն Կ Ե Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն

## ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ԱՄԵՆԱՆՈՐ ԿՐԿՆԱԵՐԵՍ ՊԼԱՍՏԻՆԿԱՆԵՐ

## „Զ Օ Ն Ո Ֆ Օ Ն“

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԳԵՐ

ՀԱՅԵՐԷՆ, ՎՐԱՑԵՐԷՆ, և ԹՈՒՐՔԵՐԷՆ

ԳՆԵՐԸ { փոքրը 75 կ. / «գրանդը» 1 ր. 50 կ.

101006. Հօրեղբօր պատմածը, դերասան Աւետեան։
64060. Ջան մարալ ջան, ժողովրդ. երգ տիկ. Աննա և Վառվառէ։
102224. Ուրիշի հաշւով, Փիրումեան։
62274. Անիի ողբը, Շահրամեան։
102225. Սիրահարի թաշկինակը, Փիրումեան։
62275. Ախ, իմ Հայաստան, ազատ. ձայն.
102226. Անդրիան, կատ. Փիրումեան
62276. Զմեռ, Շահրամեան։
104675. Հօյ, նազանըմ. ժողովրդական երգ. կատար. Ներսիսեան ուսումնար. խումբը։
108059. Աստւած լուսոյ, աղօթք զուռնայով տրիօ։
2—102992. Գիժուղիտ, Փիրումեան։
2—102990. Անփոյթ նուստասի տիկ. Աննա և Վառվառէ։
2—102991. Մօտա է, բա՛, Փիրումեան։

108058. შახნაზი, ზურნით.
102229. სულიკო, გიგო აკკ. საზანდარი.
104504. შენ ხარ ვენახო, სასულიერო საგალობელი, მუს. მღ. კარბელაშვილისა, ხორო ცამციევისა.
102227. ჰარიალალე, გიგო აკკ. საზანდარი.
103040. აბ სულო-სულო, ბარბარე.
108016. კინტოური, დუდუკი, ზურნა.
108017 შალახო, დუდუკი, ზურნა.
2—102993. ორთავ თვალის სინათლევ, გიგო აკკ. საზანდარი.
104677. მრავალ-ჟამიერ, ხორო ცამციევისა.
2—102995. ოდელია, კარგარეთელი.
104676. ქართული მარში, ხორო ცამციევისა.
2—102994. თავო ჩემო, ბედი არ გიწერია, კარგარეთელი.
63414 ბაქო ქალაქი, ადგილობრივი კილო, სიტყვები რუსული, ქალის ხმა

102228. تصنیف گیلانی
63119. ماهنی قزازاق دخله ج وارووارا
109264. هنگی جناب نرسیس قارقانوف شالاخو ولزگی
63120. ماهنی آی ادغ آ داغلار ج آنا
2—102996. جناب محمد خلیل اوف رهاب
2—102997. سه گاه جناب محمد خلیل اوف
2—102998. تصنیف کیلال
63416. قاجار بیاتی کیشی سسی
109348. چارگاه ج آوانس کمانچه
10937. مقامث عرقی عورغانوف تارایله
63415. کیشی سسی ساز چالنماقیله هراتی
108060. صباحی بقراط زورنه ایله

ZONOPHONE TRADE-MARK



ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐ
„ՊՐՕՎՕԴՆԻԿ"
ԱՐՏՕՆԻԱԾ
Ամենայնը Աշխարհում



Ամենառաջին և ամենաբարձր ամրութեան, լաւ յատկութեան, շքեղ ֆասօնների և ամենալաւ գործածւող նիւթերից։

ԱՆՊԱՅՄԱՆ ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԶՈՅԳԻ ԱՆԹ-ՐԻՆԱԿ ԱՄՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ



ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐ
ՊՐՕՎՕԴՆԻԿ
ԱՐՏՕՆԻԱԾ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ ԱՄԲՈՂՋ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ՄԻԻՆԽ ԵՒ ՎԷՅՍ
ԹԻՖԼԻԶՈՒՄ ԵՒ ԲԱԳՒՈՒՄ
ПРОВОДНИКЪ РИГА
1888



Мебельный магазинъ
**БР. ГАЛУМОВЫХЪ,**
*Мадатовская ул., противъ Александровскаго сада*

Имѣется постоянно большой выборъ:
УМЫВАЛЬНИКОВЪ: англискихъ и московскихъ.
КРАВАТЕЙ: англійскихъ, подносныхъ и мѣстной работы.
ЗЕРКАЛА: простѣночныхъ, для переднихъ и фантази
МЯГКОЙ МЕБЕЛИ: „Рококо", модернъ и др. стилей, орѣховой мягкой и вѣнской.
СТУЛЬЕВЪ вѣнскихъ всемірно известныхъ фабрикъ „ТОННЕТЪ" и „ВОЙЦЕХОВА", а также дубовыхъ, спеціально для столовыхъ.
ГРОМАДНѢЙШІЙ выборъ буфетовъ, обѣденныхъ, письменныхъ, ломберныхъ и др. столовъ, комодовъ, шифоньероьъ, библіотекъ, гардеробовъ, вѣшалокъ и пр.
**Полная стильная обстановка комнатъ.**



ОСПЕННЫЙ ТЕЛЯТНИКЪ
ЖИВОПИСЦЕВА въ г. ОРЛѢ.



ԾԱՂԻԿԻ ՀՈՐԹՈՒԻ. Դեղերի գինը՝ 50 մարդի համար—25 կոպ. 25 մարդի—15 կոպ. խողովակի մէջ—5 մարդու համար՝ 5 կոպ.։ Մի քուրլուց պակաս—չէ վաճառւում։ ճանապարհածախսի համար—30 կոպ։ Երեք քուրլուց աւելի ուղարկելի ՀԱՄԱԿԱՏԱՐԻ ՁԵՂՋ մինչև 20 ...։ Օրեօլ քաղաք, Ծաղկի հորթուկ ծխլոպիցեխ


«ԽԱԹԱԲԱԼԱ»-Ի

Կոմպլեկտներ փառաւեր կազմած

| | | |
|---|---|---|
| 1906 | թւի արժէ | 5 ր. |
| 1907 | թւի » » » | 7 ր. |
| 1908 | թւի » » » | 7 ր. |

Ցանկացողները պէտք է ուղարկեն կանխաւճար 3 ր. որոնց կուղարկենք վերադիր վճարով։


ПЕРВАЯ
художественная хромо-литографія
**С. БЫХОВА**
*Тифлисъ, Головинскій просп. около цирка*

Печатаются всевозможныя литографскія работы въ разныхъ стиляхъ.
Также всевозможныя ярлыки спеціально для водочныхъ и винныхъ складовъ и т. п.
ПО САМЫМЪ УМѢРЕНЫМЪ ЦѢНАМЪ
**Работы исполняются лучшими европейскими мастерами**



Դէ՛հ քաշեցէք սիրուն եզներ, յառաջ տարէք արօրը

# ՄԱՀՒԱՆՊԱՏԻԺԸ ԱԶԱՏ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ



Կլեմանսօ.— Որքան դիւրալի է և առողջարար կուլտուրական ֆրանսիացու համար ընդունել տաք վաննա (արիւնալի)



ԽՄԲԱԳՐԱՏԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ